ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 3

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԸ

Հոդված 5. Ազգային ժողովի նախագահը

1. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

2. Ազգային ժողովի նախագահը՝
1) նախագահում է Ազգային ժողովի նիստերը.
2) գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ.
3) շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով.
4) Հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները.
4.1) Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը.
4.2) Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները.
5) ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները.
6) հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը.
7) Ազգային ժողովի և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերը.
8) ստորագրում և հրապարակում է Խորհրդի որոշումները.
9) հաստատում է Ազգային ժողովի հանձնաժողովների կազմերը և դրանցում փոփոխությունները.
<u>9.1) հաստատում է Ազգային ժողովի պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի (այսուհետ՝ էթիկայի հանձնաժողով) կազմը և դրանում փոփոխությունները, նշանակում է էթիկայի հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին.</u>
10) կարող է Ազգային ժողովի նախագահի տեղակալին տալ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հանձնարարություններ.
11) ըստ անհրաժեշտության հրավիրում է քաղաքական խորհրդակցություններ.
12) տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները.
13) նշանակում և ազատում է զբաղեցրած պաշտոններից՝ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալներին.
13.1) հաստատում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև նշանակում և ազատում է զբաղեցրած

պաշտոններից Աշխատակազմում քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին.

14) հաստատում է Աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.

15) իրավասու մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) փորձագետներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նրանց պաշտոնների նկարագրերը.

16) (կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-46-Ն)

17) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ՝ սահմանելով դրանց անցկացման կարգը.

18) կարող է ձևավորել հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմիններ.

19) նշանակում է Սահմանադրական դատարանում Ազգային ժողովի ներկայացուցիչ.

20) կարող է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին.

21) հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները.

22) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով, ինչպես նաև խրախուսում է դրամական պարգևատրմամբ.

23) նշանակում է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի անդամի թեկնածու առաջադրելու իրավասություն ունեցող Ազգային ժողովի մշտական հանձնաժողով.

24) պատգամավորի նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված կարգապահական միջոց էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշման հիման վրա.

25) Ազգային ժողովի նախագահը պատգամավորի նկատմամբ էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշման հիման կիրառում է հետևյալ կարգապահական միջոցները.

ա. նկատողություն

բ. Ազգային ժողովի նիստերին խոսափողից հանդես գալու իրավունքից մինչև յոթ օրով զրկում.

գ. Ազգային ժողովի նիստերի օրերին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում

դ. Ազգային ժողովի կողմից գործուղման մեկնելու (ներառյալ միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում) հնարավորությունից մինչև մեկ տարով զրկում:

3. Իր լիազորություններն իրականացնելիս Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշումներ և կարգադրություններ, որոնք երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.parliament.am), բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

(5-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն, 13.09.19 ՀՕ-175-Ն, խմբ. 21.01.20 ՀՕ-46-Ն, լրաց. 11.05.20 ՀՕ-264-Ն, փոփ., լրաց. 22.06.20 ՀՕ-309-Ն, 21.01.20 **ՀՕ-46-Ն***)*

ԳԼՈՒԽ 6

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 16. Ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը

1. Ժամանակավոր հանձնաժողովը կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար: Էթիկայի հանձնաժողովի ստեղծումը, գործունեությունը և այլ առանձնահատկությունները կարգավորվում են սույն օրենքի 19.1-19.4-րդ հոդվածներով:

2. Ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը:

3. Ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-6-րդ մասերով սահմանված սկզբունքներին համապատասխան:

4.Ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին Ազգային ժողովի որոշմամբ սահմանվում են հանձնաժողովի անվանումը, գործունեության ժամկետը, ինչպես նաև նրա իրավասությանը վերապահված նախագծի կամ պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ եզրակացությունների ներկայացման ժամկետները:

5. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումից հետո նրան են անցնում գլխադասային հանձնաժողովի իրավասությունները և գործառույթները:

6. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ, երկարաձգվել հանձնաժողովի իրավասությանը վերապահված նախագծի քննարկման համար անհրաժեշտ ժամանակահատվածով:

~~7. Պատգամավորական էթիկայի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև երկու ամիս է, որը կարող է հարցի քննարկումն ավարտելու նպատակով մինչև մեկ ամսով երկարաձգվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ:~~

ԳԼՈՒԽ 6

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 17. Ժամանակավոր հանձնաժողովի գործունեությունը

1. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովն իր իրավասության շրջանակում իրականացնում է գլխադասային հանձնաժողովի, ինչպես նաև մշտական հանձնաժողովին վերապահված մյուս լիազորությունները:

~~2. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝~~

~~1) քննարկում և Ազգային ժողով եզրակացություն է ներկայացնում իր իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ.~~

~~2) կարող է հարցմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց.~~

~~3) հարցմամբ կարող է պահանջել և օրենքով սահմանված կարգով ստանալ հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.~~

3. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի պահանջած տեղեկությունները և եզրակացությունները պետք է նրան ուղարկվեն հարցումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե հարցման մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում: Հանձնաժողովի անդամները հարցմամբ պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

4. Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի հարցմամբ հանձնաժողովին են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

~~5. Պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովի նիստում չի քննարկվում և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:~~

6. Ժամանակավոր հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի 15-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան:

~~7. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի նիստերը փակ են, իսկ հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին: Հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեն միայն հանձնաժողովի անդամները, հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք, ինչպես նաև այն պատգամավորը, որի վերաբերյալ հարցը հանձնաժողովը քննում է: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի կողմից որոշված անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:~~

8. Ժամանակավոր հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 19. Ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունների ավարտը

1. Ժամանակավոր հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են նրա գործունեության ժամկետն ավարտվելու կամ լուծարվելու դեպքում:

2. Առանձին նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները դադարում են նաև նրա իրավասությանը վերապահված նախագիծն ընդունվելու կամ շրջանառությունից դուրս գալու այլ դեպքում:

~~3. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները դադարում են նաև հետևյալ դեպքերում.~~

~~1) պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողով ներկայացվելու պահից.~~

~~2) այն պատգամավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքում, որի վերաբերյալ հարցը հանձնաժողովը քննում է:~~

4. Ժամանակավոր հանձնաժողովը կարող է լուծարվել Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

Հոդված 19.1. էթիկայի հանձնաժողովի ստեղծումը և կազմավորումը

1.էթիկայի հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի լուրաքանչյուր հերթական նստաշրջանի առաջին հերթական նիստում, խմբակցության առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ և գործում է մինչև նույն գումարման Ազգային ժողովի հաջորդ էթիկայի հանձնաժողովի ստեղծումը:

2. էթիկայի հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ սույն հոդվածով սահմանված սկզբունքներին համապատասխան:

3. էթիկայի հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին նշանակում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են սույն հոդվածով սահմանված սկզբունքները:

4. Խմբակցությունն էթիկայի հանձնաժողովում ունի առնվազն մեկ անդամ ներկայացնելու իրավունք: Եթե կառավարող խմբակցությունների ընդհանուր թիվը հավասար չէ ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թվին, ապա էթիկայի հանձնաժողովի կազմը համալրվում է լրացուցիչ անդամով (անդամներով), հետևյալ կարգով՝

1) եթե կառավարող խմբակցությունների ընդհանուր թիվը մեծ է ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թվից, ապա դրանց տարբերությունը կազմող տեղում (տեղերում) մեկական լրացուցիչ անդամ հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է ընդդիմադիր խմբակցություններին.

2) եթե ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թիվը մեծ է կառավարող խմբակցությունների ընդհանուր թվից, ապա դրանց տարբերությունը կազմող տեղում (տեղերում) մեկական լրացուցիչ անդամ հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է կառավարող խմբակցություններին.

3) լրացուցիչ անդամի (անդամների) առաջադրման հաջորդականությունը որոշվում է ըստ նրա (նրանց)՝ առաջադրման իրավունք ունեցող խմբակցությունների թվի՝ մեծաթվից փոքրաթիվ.

4) լրացուցիչ անդամ (անդամներ) առաջադրվում է (առաջադրվում են) մինչև էթիկայի հանձնաժողովի անդամների թափուր տեղերի համալրումը՝ ապահովելով կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների թվի հավասարությունը:

5. էթիկայի հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը նշանակվում են էթիկայի հանձնաժողովի անդամների թվից՝ խմբակցությունների ներկայացմամբ: էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու հաջորդաբար առաջադրելու

իրավունքը պատկանում է ընդդիմադիր և կառավարող խմբակցություններին ըստ թվի՝ մեծաթվից փոքրաթիվ: Եթե էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է՝

1) կառավարող խմբակցության ներկայացուցիչը, ապա էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում թեկնածու հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է ընդդիմադիր խմբակցություններին ըստ թվի՝ մեծաթվից փոքրաթիվ.

2) ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, ապա էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում թեկնածու հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է կառավարող խմբակցություններին ըստ թվի՝ մեծաթվից փոքրաթիվ:

6. էթիկայի հանձնաժողովի անդամների առաջադրման, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է մինչև էթիկայի հանձնաժողովի լիազորությունների ավարտը:

7.Խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված էթիկայի հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ:

8. էթիկայի հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի կամ հանձնաժողովի այլ անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նրա պատգամավորական լիազորությունները դադարել կամ դադարեցվել են.

2) էթիկայի հանձնաժողովի լիազորություններն ավարտվել են.

3) նա դուրս է գալիս էթիկայի հանձնաժողովից.

4) խմբակցությունը նրան փոխել է նոր անդամով

5) նա դուրս է գալիս կամ հեռացվում է խմբակցությունից, եթե այդ խմբակցությունը նրա տեղում նշանակում է խմբակցության անդամի

6) էթիկայի հանձնաժողովը՝ նրա կողմից «Պատգամավորական էթիկայի կանոնագրքի» պահանջների խախտում արձանագրող եզրակացություն տալու մասին որոշում է ընդունել:

9. էթիկայի հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թափուր պաշտոնը կամ հանձնաժողովի այլ անդամի թափուր տեղը լրացվում է սույն հոդվածով սահմանված կարգով՝ էթիկայի հանձնաժողովի անդամ առաջադրելու կամ հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն ունեցող խմբակցության կողմից:

Հոդված 19.2. էթիկայի հանձնաժողովի լիազորությունները

1. էթիկայի հանձնաժողովը՝

1) քննարկում է պատգամավորական էթիկային առնչվող հարցեր;

2) Ազգային ժողով եզրակացություն է ներկայացնում պատգամավորի կողմից Ազգային ժողովի որոշմամբ հաստատված «Պատգամավորական էթիկայի կանոնագրքի» պահանջների խախտման վերաբերյալ;

3) պատգամավորի դիմումի հիման վրա նրա նշած հարցով նախապես եզրակացություն է տալիս նրա կողմից շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության վերաբերյալ:

2. էթիկայի հանձնաժողովը կարող է՝

1) դիմել և օրենքով սահմանված կարգով ստանալ էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր ու փաստաթղթեր.

2) էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցի փաստական հանգամանքների ուսումնասիրության համար պատվիրել փորձաքննություններ և ստանալ դրանց արդյունքում կազմված եզրակացությունները;

3) էթիկայի հանձնաժողով հրավիրել անձանց, ովքեր ներկայացրել են կամ կարող են ներկայացնել հանձնաժողովում քննարկվող հարցի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:

3. էթիկայի հանձնաժողովի պահանջած տեղեկությունները, նյութերը, փաստաթղթերը և եզրակացությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց կողմից պետք է ուղարկվեն գրավոր դիմումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, եթե դիմումի մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ դիմումի հասցեատերը էթիկայի հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում:

4. Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները էթիկայի հանձնաժողովի գրավոր դիմումով նրան են տրամադրվում օրենքով սահմանված կարգով: էթիկայի հանձնաժողովի անդամները դիմումով պահանջվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Հոդված 19.3. էթիկայի հանձնաժողովում հարցի քննարկումը

1. էթիկայի հանձնաժողովը կարող է սկսել հարցի քննարկում՝

1) դիմումի հիման վրա;

2) սեփական նախաձեռնությամբ:

2. էթիկայի հանձնաժողով կարող է դիմել յուրաքանչյուր ոք: Դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

2) դիմողի հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը.

3) այն պատգամավորի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը.

4) «Պատգամավորական էթիկայի կանոնագրքի» պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ և առկայության պարագայում՝ նյութեր և փաստաթղթեր.

5) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

6) դիմողի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

3. Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

4. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա էթիկայի հանձնաժողովի քարտուղարն առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը:

5. էթիկայի հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, սակայն ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, էթիկայի հանձնաժողովը որոշում է ընդունում հարցի քննարկում սկսելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ:

6. էթիկայի հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե՝

1) դիմումում առաջադրված հարցը ենթակա չէ էթիկայի հանձնաժողովի քննարկմանը.

2) նույն պատգամավորի վերաբերյալ, նույն հիմքով և նույն փաստական հանգամանքներով առկա է էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշում.

3) դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ էթիկայի հանձնաժողովում արդեն իրականացվում է հարցի քննարկում

4) եթե դիմումում նշված դեպքից անցել է ավելի քան երեք ամիս:

7. էթիկայի հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է սկսել պատգամավորական էթիկային վերաբերող հարցի քննարկումը, եթե առաջադրված հարցի դեպքից չի անցել երեք ամիս:

8. էթիկայի հանձնաժողովում հարցի քննարկում սկսելու մասին որոշման ընդունումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դիմողին և պատգամավորին, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկելու է, ծանուցում է այդ մասին:

9. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դիմումը և դրան կից նյութերը և փաստաթղթերը, էթիկայի հանձաժողովում դիմումումը մերժելու մասին որոշման ընդունումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է դիմողին:

10. Էթիկայի հանձնաժողովը հարցի քննարկումն ավարտում է հարցի քննարկում սկսելու վերաբերյալ իր որոշման ընդունումից հետո՝ մեկամսյա ժամկետում, որը կարող է էթիկայի հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել մեկ անգամ մինչև մեկ ամսով: Հարցի քննարկման նոր ժամկետի մասին էթիկայի հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է դիմողին և այն պատգամավորին, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է: Հարցի քննարկումը չի կարող գերազանցել վեց ամիսը՝ ներառյալ կասեցման ժամկետը:

11. Էթիկայի հանձնաժողովը կարող է կասեցնել հարցի քննարկումը, եթե՝

1) անհնարին է տվյալ հարցի վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի որոշման ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով վերջնական դատական ակտ կայացնելը.

2) եթե այն պատգամավորը, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է, հարգելի պատճառներով բացակայում է, և էթիկայի հանձնաժողովը նախքան եզրակացություն տալու մասին որոշում ընդունելը անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը:

12. Եթե էթիկայի հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս փաստեր, որոնք առերևույթ հանցագործության հատկանիշներ են պարունակում, էթիկայի հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահը 24 ժամվա ընթացքում հարցին առնչվող բոլոր նյութերն ուղարկում է գլխավոր դատախազին:

13. Եթե էթիկայի հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս փաստեր, որոնք պարունակում են պատգամավորի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտման առերևույթ հատկանիշներ էթիկայի հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահը 24 ժամվա ընթացքում հարցին առընչվող բոլոր նյութերը ուղարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

14. Հարցի քննարկումը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում:

15. Հարցի քննարկումը կարճվում է, եթե՝

1) Ազգային ժողովի լիազորություններն ավարտվել են

2) սահմանված ժամկետներում չի ավարտվել հարցի քննարկումը

3) էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշումը քվեարկության արդյունքում չի ստացել ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ.

4) դադարել կամ դադարեցվել են այն պատգամավորի լիազորությունները, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է.

5) օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքով էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշման ընդունման անհրաժեշտությունը վերանում է:

16. էթիկայի հանձնաժողովի քարտուղարը հարցի քննարկումը կարճելու, կասեցնելու և վերսկսելու, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշման պատճենները երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է դիմողին և այն պատգամավորին, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է:

17. Յուրաքանչյուր հերթական նստաշրջանի էթիկայի հանձնաժողովի լիազորությունների ավարտից հետո անավարտ հարցերի քննարկումը տեղափոխվում է հաջորդ հերթական նստաշրջանի էթիկայի հանձնաժողով:

Հոդված 19.4. էթիկայի հանձնաժողովի գործունեությունը

1. էթիկայի հանձնաժողովի նիստերն անցկացվում են մշտական հանձնաժողովների համար Կանոնակարգի 15-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, հետևյալ տարբերությամբ.

1) հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին.

2) հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին.

3) հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամները քվեարկում են կողմ կամ դեմ: Ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է նիստը նախագահողի ձայնը.

4) հանձնաժողովի նիստերը փակ են: Հանձնաժողովի որոշմամբ հանձնաժողովի նիստերը կարող են լինել հրապարակային, եթե առկա է այն պատգամավորի համաձայնությունը, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է: Հանձնաժողովի փակ նիստում, հանձնաժողովի անդամներից բացի, կարող են ներկա գտնվել միայն հանձնաժողովի որոշմամբ կամ հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք.

5) որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ հարցի ուսումնասիրության արդյունքները հանձնաժողով ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը

6) հանձնաժողովի նիստում ներկա լինելու իրավունք ունեցող կամ հրավիրված այլ անձինք կարող են ելույթ ունենալ, այդ թվում՝ վարման կարգի վերաբերյալ, հարցեր տալ և պատասխանել հարցերի նիստը նախագահողի թույլտվությամբ կամ հանձնաժողովի որոշմամբ։

7) հանձնաժողովը պարտավոր է հնարավորություն տալ այն պատգամավորին, որի վերաբերյալ հարցը էթիկայի հանձնաժողովը քննարկում է, ներկայացնել իր դիրքորոշումը, ելույթ ունենալ, հարցեր տալ և պատասխանել հարցերի: Հարցի քննարկման սկզբում պատգամավորը կարող է ծանոթանալ իրեն վերաբերող դիմումին, տեղեկություններին, նյութերին և փաստաթղթերին և ներկայացնել իր դիրքորոշումը: Հարցի քննարկման ավարտին պատգամավորը կարող է ծանոթանալ հարցի քննարկման ընթացքում ձեռք բերված այլ տեղեկություններին, նյութերին և փաստաթղթերին և ներկայացնել իր դիրքորոշումը մինչև հանձնաժողովը կկայացնի եզրակացություն տալու մասին որոշում: Պատգամավորը կարող է իր դիրքորոշումը ներկայացնել բանավոր կամ գրավոր՝ դրա համար ստանալով առնվազն մեկ շաբաթ ժամանակ։

8) հանձնաժողովի հարցի քննարկում սկսելու և եզրակացություն տալու մասին որոշումները պետք է լինեն գրավոր և պատճառաբանված: Հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշման մեջ ըստ անհրաժեշտության առաջարկվում է պատգամավորի նկատմամբ կիրառման ենթակա կարգապահական միջոցի տեսակը: Հանձնաժովի նիստը արձանագրվում է.

9) հանձնաժողովի անդամները և հանձնաժողովի աշխատանքներին մասնացող այլ անձինք չեն կարող հարցի քննարկման կամ ուսումնասիրության ընթացքում այլ անձանց մասին իրենց հայտնի դարձած տվյալները հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության.

10) պատգամավորը չի կարող հանձնաժողովի անդամի կարգավիճակով մասնակցել հանձնաժողովում հարցի քննարկմանը, եթե նա կամ նրա հետ փոխկապակցված անձը դիմումի հեղինակն է, կամ հանձնաժողովը քննարկում է նրա կամ նրա հետ փոխկապակցված անձի հարցը: Սույն օրենքի իմաստով պատգամավորի հետ փոխկապակցված անձինք են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք:

2. էթիկայի հանձնաժողովը ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

3. էթիկայի հանձնաժողովի եզրակացություն տալու մասին որոշումները հրապարակվում են Ազգային ժողովի նիստում և տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հոդված 162. Հանձնաժողովների գործունեության ապահովումը

1. Աշխատակազմը Ազգային ժողովի հանձնաժողովներին ապահովում է նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցներով:

2. Մշտական հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է մշտական հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

3. Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ համակարգող փորձագետ, առնվազն երկու փորձագետ (մասնագետ) և մեկ գործավար (օգնական): Մշտական հանձնաժողովի գործավարը (օգնականը) աշխատանքի է ընդունվում և ազատվում աշխատանքից համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, իսկ համակարգող փորձագետը և մյուս փորձագետները (մասնագետները) քաղաքացիական ծառայողներ են: Մշտական հանձնաժողովի փորձագետների թիվը կարող է ավելացվել հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ:

4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) իրավական վիճակը որոշվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև քննիչ հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում են համապատասխան հանձնաժողովի անդամների վճարովի հիմունքներով աշխատող օգնականները կամ Աշխատակազմի համապատասխան մասնագետները:

~~6. Մինչև պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում և երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողով ստեղծվելուց հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) քաղաքացիական ծառայող է:~~

6. Էթիկայի հանձնաժողովի գործունեության սպասարկումն իրականացնում են հանձնաժողովի քարտուղարը և գործավարը, որոնք աշխատանքի են ընդունվում և ազատվում աշխատանքից Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան և բարեվարքության հարցերով կազմակերպիչը, որը աշխատանքի է ընդունվում և ազատվում քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության համապատասխան: